ԼԵՆԻՆՅԱՆ ԳԱՂԱՓԱՐՆԵՐԻ ԱՆՆԿՈՒՆ ՊՐՈՊԱԳԱՆԴԻՍՏԸ ԵՎ ՏԵՍԱԲԱՆԸ

(Արշավիր Մելիքյանի ծննդյան 90-ամյակին)

Ծ. Պ. ԱՂԱՅԱՆ

ՀՍՍՀ ԳԱ ակադեմիկոս

Արշավիր Մելիքյանը պատկանում է լենինյան գվարդիայի այն ականավոր մարքսիստների շարքին, որոնք իրենց ողջ կյանքը նվիրեցին աշխատավոր ժողովրդի ազատության գործին։ Նա բազմակողմանի զարգացած, տեսական խոր գիտելիքների տեր հեղափոխական գործիչ էր, ինքնատիպ մտահղացումների հեղինակ. Դեռ շատ վաղ հասակից նա ընդգրկվում է հեղափոխական շարժման մեջ և մինչև իր պայծառ կյանքի վերջը մնում նվիրված մեկընդմիշտ ընտրած ուղուն։

Արշավիր Մելիքյանը ծնվել է 1879 թ. հունվարի 28-ին (հին տոմարով) Երևանի նահանգի Շարուր-Դարալագյազի գավառի Փաշալու գյուղում։ Մանուկ հասակից նա աչքի է ընկնում իր արտակարգ ընդունակություններով ու սրամտությամբ։

1899 թ. Արշ. Մելիքյանը ավարտելով Երևանի արական գիմնազիան, նույն տարվա օգոստոսին ընդունվում է Խարկովի համալսարանի իրավաբանական ֆակուլտետը։ 1900 թ. օգոստոսին իր դիմումի համաձայն նրան փոխադրում են նույն համալսարանի ֆիզիկո-մաթեմատիկական ֆակուլտետը։ Խարկովում Արշավիր Մելիքյանը ընդգրկվում է ուսանողական հեղափոխական շարժումների մեջ և շուտով դառնում ուսանողական ելույթների ակտիվ կազմակերպիչներից մեկը։

Հենց ուսանողական տարիներին էլ Արշ. Մելիքյանը հանդես է գալիս որպես խոշոր հայրենասեր և ինտերնացիոնալիստ։ Ցարիզմի դաժան քաղաքականությունն ու ազգային հալածանքները մեծ հուզմունք ու բողոք էին առաջացնում նրա մեջ։ Ցարական կառավարության մեծապետական քաղաքականությունը հատկապես գռեհիկ ձևով էր անցկացնում «Новое время» *թերթը, որի դեմ Արշ. Մելիքյանը* «С.-Петербургские ведомости» *թերթի 1900 թ.*

№ 46-ում դրեց հատուկ հոդված[1]։ Այդ հոդվածում Արշ. Մելիքյանը նշում է, որ ռուսական առաջադեմ մամուլը բարձր կանգնելով նեղ ազգայնական շահերից, միշտ էլ կարեկցաբար է արտահայտվել դեպի Ռուսական կայսրության ծայրամասերում ապրող ժողովուրդների շահերը։ «Իսկ ինչ կարելի է ասել այն գրական ծաղրածուների մասին,— շարունակում է Արշ. Մելիքյանը,— որոնք այլազգիների հարցը մարդանք դարձրած մեկը մյուսից առաջ անցնելու նպատակով ձգտում են ինչքան կարելի է շատ հիմարություններ դուրս տալ։ Ինչի՞ համար են ուրիշ ազգերին նվիրված հոդվածներ տպում, հոդվածներ, որոնցում բացի փաստերի աղավաղումից, բացի հայհոյանքից և անզուսպ ստից չեր գտնի և ոչ մի բարեխիղճ հիմնավորում։ Հարց է առաջանում. ինչի՞ համար և ի՞նչ նպատակով։ Պատասխանում ենք, որ վելիկոռուսական շահերի համար։ Թունավորում, խաբեբայություն, սուտ և այլն, և այլն, այդ բոլորը վելիկոռուսական շահերի համար։ Ի՞նչ խոսք, լավ պատերազմ է»[2]։ Արշ. Մելիքյանը անարգանքի սյունին գամելով իր հակառակորդին, նշում է. «և դուք էլ դրանով ձեր տուրքը տվիք ռուսական մամուլի ռեակցիոն մասին»[3]։

Մեծապետականները հարձակվում էին հայ ժողովրդի վրա, ցանկանալով նրան վերագրել մտացածին արատներ։ Արշ. Մելիքյանը վրդովմունքով է խոսում այդ մասին և մատնանշում, որ վաղուց արդեն ապացուցված է, որ նման հերյուրանքները արդյունք են վաճառված դրչակների ցնորամտության։ Եթե անգամ ամեն մի ժողովրդի մեջ կան առանձին արատներ, ապա դրանք մասնակի երևույթներ են, որոնք չի կարելի ընդհանրացնել և վերագրել ամբողջ ժողովրդին, նամանավանդ, որ «հայ ժողովրդի բացասական կողմերը անաչառ կերպով բացահայտվել, մերկացվել և մերկացվում է հայ դրականության մեջ։ Հայկական բացերի մասին կարելի է գրել, սակայն եթե դրա նպատակն է վերացնել դրանք։ Ես որոշ պարոնների եմ հանդիպել, որոնք և ձեզ նման առանձին փաստերից ընդհանուր դատողություններ են անում և համարձակվում են պնդել, թե այս կամ այն ժողովուրդները հարբեցող և անհոգ են և այլն... Ասացեք խնդրեմ, կա արդյոք թեկուզ մի հատիկ ճշմարտացի միտք նման դատողության մեջ։ Իհարկե, չկա։ Դրանք այնքան անմիտ են, որքան ձեր կարծիքը հայերի մասին։ Թող ամոթանք լինի Ձեզ, կոլեգա»[4]։ Իր այդ հոդվածով Արշ. Մելիքյանը հանդես է գալիս որպես արդեն ձևավորված մարքսիստ, որը ամբողջովին տարված էր հեղափոխական ինտերնացիոնալիստական մտորումներով։ Ուշագրավ է նրա ինտերնացիոնալիստական մոտեցումը դեպի բոլոր ժողովուրդները, որոնց բարեկամությունը նա շատ բարձր էր գնահատում և ամենայն կրքոտությամբ խարազանում մեծապետական շովինիստներին։ Մյուս կողմից, նա նվիրված հայրենասեր էր և բարձր էր պահում իր ժողովրդի ազգային արժանապատվությունը։ Սակայն այդ բոլորը հաշվի էր առնվում ցարական հետախուզության կողմից։ Ոստիկանությանը արդեն հայտնի էր դարձել աննկուն հեղափոխականի գործունեությունը, որի համար 1901 թ. մարտի 20-ին նա հեռացվում է համալսարանից։ Նույն թ. ապրիլին Արշ. Մելիքյանին հաջողվում է նորից վերականգնել իր ուսանողական իրավունքները։ Սակայն

---

1 ՄԼԻ հայկական ֆիլիալի արխիվ, ֆ. 4056, ց. 1, գ. 20, թ. 1։

2 «С.-Петербургские ведомости», 16(28) февраля, 1900 г., № 46.

3 Նույն տեղում։

4 Նույն տեղում։

շուտով, նույն թ. նոյեմբերի 30-ին, նա նորից հեռացվում է համալսարանից և աքսորվում Կովկաս, որտեղ գտնվում էր ոստիկանության խիստ հսկողության տակ։ 1902 թ. Արշ. Մելիքյանը մասնակցում է Պետերբուրգում տեղի ունեցած ուսանողական համագումարին, որտեղ և ծանոթանում է Ստ. Շահումյանի հետ։

Արշ. Մելիքյանը գիտության ծարավը հագեցնելու համար ձգտում էր մեկնել արտասահման ուսումը շարունակելու։ 1903 թ. հոկտեմբերի 17-ի փաստաթուղթը ցույց է տալիս, որ նա Շվեյցարիայի Ցյուրիխի համալսարանի փիլիսոփայական ֆակուլտետի ուսանող էր։ Այնուհետև, նա 1904 թ. ընդունվում և 1905 թ. ավարտում է Նյուշատելի ակադեմիայի գրականության ֆակուլտետը[6]։

1904 թ. նոյեմբերի 7-ին Արշ. Մելիքյանին տրված (№ 694) քննական գրքույկը ցույց է տալիս, որ նա ուսումնասիրել է ժամանակի կարևորագույն գիտությունները՝ այն է՝ հունական փիլիսոփայության պատմություն, ընդհանուր փիլիսոփայություն, ֆրանսիական, իտալական, անգլիական և գերմանական կլասիկ գրականություն և այլն։ Գյոթեի մասին դասընթաց է անցել, ուսումնասիրել է Եվրոպայի պատմությունը, հատուկ կուրս լսել Նապոլեոն 1-ի մասին և խորացել մի շարք այլ առարկաներում[7]։

Շնորհիվ իր արտակարգ ընդունակությունների, նա կարճ ժամանակում տիրապետում է գերմաներենին, ֆրանսերենին, անգլերենին, հունարենին։ Համաշխարհային դասական գրականության կոթողները նա կարդում և ուսումնասիրում էր բնագրից, որոնցից առանձին հատվածներ, շատ դեպքում էլ առանձին գործեր, կարող էր արտասանել բերանացի։

Արտասահմանում Արշ. Մելիքյանը շուտով սերտ կապերի մեջ է մտնում ռուս հեղափոխական վտարանդիական շրջանների, ինչպես նաև Արևմտյան Եվրոպայի ականավոր սոցիալ-դեմոկրատական գործիչների հետ։ Նրան լավ ճանաչում էին Վ. Ի. Լենինը, Գ. Վ. Պլեխանովը, Լունաչարսկին, Կարլ Լիբկնեխտը, Ռ. Լյուքսեմբուրգը, Ժան Ժորեսը, Ավգուստ Բեբելը և շատ ուրիշներ, որոնք Արշ. Մելիքյանին համարում էին լավագույն մարքսիստ-տեսաբան։ Լենինի հետ ծանոթությունն ու նրա հետ սերտ բարեկամական կապերի ստեղծումը բախտորոշ նշանակություն ունեցան Արշ. Մելիքյանի հետագա ողջ գործունեության համար։ Վ. Ի. Լենինի մասին խոսելիս նա դառնում էր իսկական բանաստեղծ ու ստեղծագործող։ Վ. Ի. Լենինին նա պատկերել է, որպես «պայքարող հոգու հսկա ու վեհապանծ էվերեստ»։

Նման բնորոշումը ցույց է տալիս Արշ. Մելիքյանի անսահման սերն ու նվիրվածությունը մեծ առաջնորդի տաղանդին, նրա գերող հմայքին, որը երևվում է նրա ողջ գործունեությունից։

1906 թ. Արշ. Մելիքյանը մտնելով ՌՍԴԲԿ շարքերը, դառնում է նրա հավատարիմ զինվորն ու նվիրված գործիչը։ Ռեակցիայի տարիներին, երբ սկսվեցին ցարիզմի սոլի հալածանքները, տարընթացության հետևանքով կուսակցության մեջ ծանր վիճակ էր առաջացել, մանրբուրժուական ու մտավորական անկայուն տարրերը տատանվում էին, Արշ. Մելիքյանը ամուր կանգնած մնաց լենինյան դիրքերում և հանդես եկավ իր տեսական դրույթներով ու մերկացրեց

---

5 ՄԼԻ հայկ. ֆիլիալի արխիվ, ֆ. 4056, ց. 1, գ. 1, թ. 6։

6 Նույն տեղում։

7 ՄԼԻ հայկական ֆիլիալի արխիվ, ֆ. 4058, ց. 1, գ. 1, թ. 6։

մախիստների իդեալիստական հայացքները։ Նա մարքսիստ տեսաբաններից առաջիններից մեկն էր, որ հանդես եկավ Վ. Ի. Լենինի «Մատերիալիզմ և էմպիրիոկրիտիցիզմ» աշխատության պաշտպանությամբ։

1911 թ. Արշ. Մելիքյանը, մարքսիստական կուռ պատրաստականություն ստացած, վերադառնում է Երևան և Գայանյան դպրոցում դասավանդում ռուսաց լեզու, գրականություն, Ռուսաստանի, հայ ժողովրդի պատմություն, բնապատմություն։ Այդ շրջանից սկսած նա խոր հետքեր է թողնում և մեծ ազդեցություն ունենում հայ մարքսիստական մտքի ձևավորման ու զարգացման վրա և տեսականորեն պատրաստված մարքսիստ-գործչի համբավ ստանում։

Հետագա տարիներին ևս նա շարունակում է իր աշխատանքը Գայանյան օրիորդաց դպրոցում։

*

Արշ. Մելիքյանը արտասահմանից վերադառնալով, ամբողջովին նվիրվում է Ռուսաստանի տնտեսական կյանքի և բանվորական հեղափոխական շարժումների ուսումնասիրման գործին։ Այդ բնագավառում նրա կատարած աշխատանքը զգալի հետաքրքրություն է ներկայացնում։

Ցարական Ռուսաստանի տնտեսական ու քաղաքական կյանքի վերլուծման տեսակետից կարևոր տեղ է գրավում 1912 թ. Արշ. Մելիքյանի «Սովը Ռուսաստանում»[8] գրած հոդվածը։ Հեղինակը նշում է, որ անբերրիության պատճառով առաջացած սովը տարածվել է Ռուսաստանի բազմաթիվ նահանգներում։ «Թե ինչպիսի չափեր և ծավալ է ընդունել այդ...,— գրում է Արշ. Մելիքյանը,— ճիշտ կերպով որոշելը առայժմ շատ էլ հեշտ չէ, որովհետև պաշտոնական և գրական տեղեկությունները զգալի կերպով տարբերվում են իրարից»[9]։

Պաշտոնական տվյալները ցույց են տալիս, որ անբերրիությունից վնասվել էին 20 նահանգներ, որոնցից 8-ը՝ ամբողջապես։ Ռուսաստանի բնակչության 1/7 մասը՝ 19,5 միլիոնը սովամահությունից փրկելու համար անհապաղ օգնության կարիք էր զգում։ Երկրի հացի պակասը լրացնելու համար հարկավոր էր լրացուցիչ 485 միլիոն փութ հաց, որի համար անհրաժեշտ էր 121 միլ. ռուբլի։

Կառավարությունը և նախարարների խորհրդի նախագահ Կոկովցևը նոյեմբերի 2-ին հայտարարելով, որ արդեն բաց են թողել 57 միլիոն ռուբլի, միևնույն ժամանակ նշում էին. «այն բոլորը, ինչ որ պետությունը կարող էր անել՝ արել է»[10]։ Սակայն սովի հետևանքները ավելի սարսափելի աղետներ էին բերում, քան այն պատկերացնում և անտարբեր կերպով նշում էին ցարական չինովնիկները։ «Տնտեսապես ավերված և քայքայված նահանգներում կա արդեն տիֆ և ընդացավ,— իսկ ազգաբնակչությունը ծախում է տնային անասունները և ուտում է, ինչ որ ճարում է»։ Ի նկատի ունենալով, երկրում ստեղծված քայքայվածությունը, սովի ու համաճարակի հետևանքով առաջացող ծանր դրությունը և ցարական կառավարության անհոգությունը, Արշ. Մելիքյանը գրում է.

---

8 Հավանական է այդ թվականին, քանի որ այն գրված է Տոլստոյի մասին հոդվածի հետ, նույն տետրում, նույն թանաքով։

9 Նույն տեղում, գ. 21, թ. 3։

10 Նույն տեղում։

«Կարելի՞ է արդյոք առանց ուշադրության թողնել այն, որ ամբողջ Ռուսաստանի ազգաբնակչության 1/7 (պաշտոնական վիճակագրություն) կամ 1/5 (ոչ պաշտոնական վիճակագրություն) ուտելու հաց չունի, որ շատ նահանգներ սովամահ լինելու սպառնալիքի տակ են գտնվում, և որ շատերը արդեն մեռնում են սովից, զոհ դնալով զանազան հիվանդությունների»[11]։

Սակայն մարքսիստ տեսաբանը, վերլուծելով երևույթների սոցիալ-քաղաքական արմատները, հարց է տալիս. «Որտե՞ղ է չարիքի արմատը և որո՞նք են նրա հետևանքները։ Նախարարների խորհրդի նախագահը պնդում է, որ պատճառը անձրևների բացակայության, չոր ու տաք ամառվա մեջ պետք է որոնել»[12]։ Արշ. Մելիքյանը կոնկրետ փաստերով մերժելով այդ կարծիքը, գրում է. «Եթե իրավացի և արդարացի է այդ պնդումը, ինչո՞վ ապա բացատրել այն, որ սկսած մանավանդ 1891 թվականից անբերրիությունը և սովը պարբերաբար հաճախում են լայնածավալ պետությանը և որ այդ պարբերական կերպով կրկնվող սովը անծանոթ երևույթ է քաղաքակրթված երկրներին։ Սովը գալիս է մեկ անգամ ևս ապացուցելու, որ ռուս ժողովուրդը դեռ ամբողջապես կախված է բնության տարերային ուժերից և դեռ չի կարողացել հաղթահարել նրանց, սակայն մեղավո՞ր է նա. այդ ժողովուրդը, երբ նրա բոլոր ջանքերը՝ բարձրանալ կուլտուրապես... հանդիպել են մի շարք արգելքների, խոչընդոտների ու հալածանքների։ Կարո՞ղ էր միթե այդ ժողովուրդը հաղթել բնությանը և տնտեսապես ուժեղ դառնալ, երբ նրա կամքը և միտքը միշտ կաշկանդել են, միշտ ճնշել են։ Ահա թե որտեղ պետք է որոնել չարիքի բուն արմատը, եթե մարդը չի կամենում մակերևութորեն և հարևանցի կերպով մտածել նրա մասին։ Իսկ սովի հետևանքները պարզ են»[13]։ Այս բոլորից հետո, Արշ. Մելիքյանը հարց է տալիս. «Ի՞նչ է մնում անել քաղաքական գիտակից տարրերին։ Կրկնել այն ճշմարտությունները և աքսիոմաները, որոնք վաղուց արդեն ասված, կրկնված են և որոնց դրժեցին, որոնցից հրաժարվեցին բոլոր քաղաքական ռենեգատներն ու նևրաստենիկները»[14]։ Արշ. Մելիքյանը, լինելով հետևողական մարքսիզմի լենինյան տիպի գործիչ, գտնում էր, որ հեղափոխական ճանապարհով երկրի սոցիալ-քաղաքական կարգերը վերափոխելով միայն հնարավոր կլինի ազատել Հայաստանի աշխատավորությանը սովից, համաճարակներից և ամեն տեսակի դժբախտ ադետներից։

Այս առումով էլ Արշ. Մելիքյանը հատկապես ուսումնասիրում է ռուսական հեղափոխության ավանգարդի՝ բանվոր դասակարգի տնտեսական, կուլտուրական, բարոյական դրությունը։ Ընդհանրացնելով մեծ քանակությամբ վիճակագրական նյութերը, նա պարզում է բանվորների մեջ ալկոհոլի և տարբեր արատների տարածման սոցիալական արմատները և եզրահանգում, որ այդ բոլորի պատճառը գոյություն ունեցող սոցիալական կարգի տնտեսական և քաղաքական անհավասարության մեջ է։

Արշ. Մելիքյանը ուսումնասիրելով մի շարք աշխատություններ՝ Ռուսաստանի բանվոր դասակարգի դրության մասին, նշում է, որ ինչքան բարձրանում է բանվորի աշխատավարձը, այնքան քիչ է ալկոհոլի համար ծախսվող նրա բյուջեի մասը, և, ընդհակառակը, ինչքան ցածր է աշխատավարձը, այնքան

---

11 Նույն տեղում, թ. 4։

12 Նույն տեղում։

13 ՄԼԻ հայկական ֆիլիալի արխիվ, ֆ. 4056, ց. 1, գ. 21, թ. 5։

14 Նույն տեղում։

բարձր է ալկոհոլի համար ծախսը։ Նա կատարում է մի շարք հաշվումներ և ցույց տալիս, որ 81 ռ. ստացող բանվորի ալկոհոլի համար կատարած ծախսը կազմում է 8 տոկոս, իսկ 15 ռ. ստացողներինը՝ աշխատավարձի 33 տոկոսը[15]։ Պարզվում է նաև, որ բանվորական օրվա երկարությունը ևս նպաստում է ալկոհոլի տարածմանը։ Լավ բնակարանային պայմաններ ունեցող բանվորները ավելի քիչ են ալկոհոլով տարվում, քան նրանք, որոնք ապրում են վատ բնակարաններում։

Հաշվումները ցույց են տալիս, որ Ռուսաստանում բանվորների սննդի վատացման հետ մեկտեղ աճում է նաև ոգելից խմիչքների օգտագործումը և տեղի է ունենում բանվոր դասակարգի բացարձակ և հարաբերական աղքատացում։ Այսպես, 1904 թ. Ռուսաստանում օգտագործվել է 70 միլիոն դույլ օղի, իսկ 1913 թ. հասել է 109 միլ. դույլի, 1904 թ. մի շնչին ընկել է 1/2 դույլ՝ 40°-ի օղի, իսկ 1912 թ.՝ 3/5 դույլ։ Օղի վաճառող կաբակների թիվը 1912 թ. հասնում էր 26 հազարի։ Եկատերինոդարում անցկացրած անկետային տվյալների հիման վրա կատարված հաշվումները ցույց են տալիս, որ 5721 երեխաներից 3500-ը, այսինքն՝ 63 տոկոսը, օղի է խմում, ըստ որում, դրանց 25 տոկոսը սկսել է խմել 8 տարեկանից, 20 տոկոսը՝ 7, 11 տոկոսը՝ 6 տարեկանից։ Պարզվում է նաև այն, որ երկրում կատարվող բոլոր հանցագործությունների 49 տոկոսը տեղի էր ունենում հարբեցողության պատճառով[16]։

Նման հաշվումներից Արշ. Մելիքյանը հանգում է այն եզրակացության, որ այդ բոլորը հետևանք է հասարակական կարգի նեխվածության, որից ազատվելու միակ ելքը հեղափոխական ճանապարհով գոյություն ունեցող կարգերի վերացման մեջ է։

Ռուսաստանի տնտեսական-քաղաքական կյանքի խմորումները և ուժեղ բախումները իրենց արտացոլումն են գտել նաև Արշ. Մելիքյանի 1911 թ. «Ներքին կյանքից» ձեռագիր հոդվածում։

Այսպիսով, Արշ. Մելիքյանը բացահայտելով երկրում տիրող տնտեսական և քաղաքական ճգնաժամը, ցույց է տալիս հեղափոխական շարժումների անխուսափելի հասունացումն ու նրանց պատմական անհրաժեշտությունը և ստոլիպինյան դաժան ռեակցիային վերջ տալու նախապայմանները։

Արշ. Մելիքյանը ցանկանալով խոր պատկերացնել հասարակական կյանքի և բանվորական շարժման զարգացման ընդհանուր օրինաչափությունները. ուսումնասիրում է տարբեր երկրների պատմությունը և տնտեսական զարգացումը։

Պահպանվել է 1912—1914 թթ. Արշ. Մելիքյանի ձեռագիր կոնսպեկտը՝ ռուսերեն, գերմաներեն, ֆրանսերեն և հայերեն լեզուներով, որի մեջ հեղինակը հետազոտել է բազմաթիվ գրքեր և ամսագրեր, քաղվածքներ արել տարբեր երկրների տնտեսական զարգացման, ապրանքների արտահանման և գների, բնակչության աճի և հատկապես սոցիալիստական-բանվորական շարժումների, սոցիալիզմի բնորոշման և բազմաթիվ այլ հարցերի վերաբերյալ[17]։ Կոնսպեկտի բազմաթիվ էջերում բերված դրականության ցանկը ցույց է տալիս հեղինակի հետաքրքրության լայն շրջանակները, և հատկապես բազմաթիվ երկրների պատմության և կուլտուրայի հանդեպ ցուցաբերած մեծ հետաքրքրությու-

15 ՄԼԻ հայկական ֆիլիալի արխիվ, ֆ. 4056, ց. 1, գ. 54, թ. 1։
16 Նույն տեղում, թ. 2։
17 Նույն տեղում, գ. 22։

նը։ Այստեղ նշված է նաև Վ. Ի. Լենինի «Մի քայլ առաջ երկու քայլ ետ» աշխատությունը[18], որի ուսումնասիրությունն օգնել է Արշ. Մելիքյանին լենինյան գաղափարները հետևողականորեն կիրառել իր ամբողջ տեսական և գործնական աշխատանքում։

Հասարակական-քաղաքական մտքի, ինչպես նաև բանվորական հեղափոխական շարժման ուսումնասիրման այդ լայն ֆոնի վրա Արշ. Մելիքյանը խոր իմաստությամբ է լուսաբանում նաև հայկական կյանքին վերաբերող կարևորագույն խնդիրներն ու իրադարձությունները։ Այդպիսին է, օրինակ, 1917 թ. գրած հայ մամուլի մասին նրա հոդվածը։

Խոսելով հայ բուրժուական պահպանողական մամուլի մասին, Արշ. Մելիքյանը գրել է. «Հաճախ կարելի է լսել գանգատներ, որ մեր հասարակությունը հայ լրագիր և հայ գիրք կարդալ չի սիրում, գանգատը արդարացի»[19]։ Սակայն Արշ. Մելիքյանը բացահայտում է այդ երևույթի բուն պատճառը և նշում, որ «մեր հայ պարբերական մամուլը և հայ գիրքը ընթերցողին տալիս են շատ քիչ բան, կամ ավելի ճիշտ՝ հաճախ ոչինչ։ Մեր գրական շուկան լիքն է այնպիսի գրվածքներով, որտեղ շատ դժվար է գտնել կենդանի և ինքնուրույն խոսք, հրապուրող և հատուկ աշխարհայացք, հետաքրքրական նյութ, ոճը և լեզուն ծանր, աշխարհայացքը անորոշ և հակասական, անշնորհք, տափակ կոմպիլացիաներ և թարգմանություններ։ Ահա այն մտավոր կերակուրը, որ մեր գրականագետները առաջարկում են ընթերցողներին, և զարմանում են, որ ընթերցողը նրան չի մոտենում, չի ճաշակում կամ ճաշակելուց հետո չի մարսում»[20]։ Նա զայրույթով հարց է տալիս. «Ո՞ւմ և ինչի՞ համար են գրված այդ գրքերը»։ Նման օրինակ է հանդիսանում Պ. Է. Ֆրանգյանի «Ն. Կ. Միխայլովսկին որպես փիլիսոփա-սոցիոլոգ» գիրքը, որտեղ հեղինակը հանդես է գալիս «որպես ոչ փիլիսոփա, ոչ սոցիոլոգ և ոչ քննադատ»[21]։

Արշ. Մելիքյանը շատ պատկերավոր կերպով ցույց է տալիս Ֆրանգյանի դատարկաբանությունը։ «Երևակայեցեք ձեզ, ընթերցող, գրում է նա, մեկ ջրաղաց, որը ժամերով բանում է, բարձրացնում է աղմուկ, դղրդյուն և փոշի, և երբ դուք մոտենում եք ալյուրը մաղած (պետք է կարդալ աղած—Ծ. Ա.) տեսնելու կամ հավաքելու, նկատում եք, որ այնտեղ գրեթե ոչինչ չկա. այդ տպավորությունն է մարդ ստանում, երբ հաղթահարելով ձանձրույթը և տաղտկությունը կարողանում է մինչև վերջը կարդալ 207 էջից բաղկացած մի գիրք»[22]։ Բանն այն է, որ Ֆրանգյանը ոչ մի խոսք չի ասում Միխայլովսկու մարքսիստ քննադատների մասին և ինքն էլ չհասկանալով մարքսիզմը, հաճախ է վկայակոչում այն։ Այնուհետև նշում է, որ գրությունը հայ մարքսիստների շրջանում ավելի անմխիթարական է, «քանի նրանց շարքերից դեռ վանված չէ Պ. Բ. Իշխանյանի պես հանրածանոթ քաջ ասպետը»[23]։ Արշ. Մելիքյանը կոնկրետ փաստերով ցույց է տալիս, որ 1905—1906 թթ. հեղափոխական շարժումները ապացուցեցին հասարակության զարգացման օրինաչափությունը, իսկ Միխայլովսկու սուբյեկտիվիզմը կրախի մատնվեց և դուրս նետվեց։

---

18 Նույն տեղում, թ. 51։
19 Նույն տեղում։
20 Նույն տեղում, թ. 6։
21 Նույն տեղում, թ. 7։
22 Նույն տեղում, թ. 7։
23 Նույն տեղում, թ. 9։

Այդ անտեսելով և փորձելով կեղծել իրականությունը, Ֆրանդյանը նշում է, որ «Միխայլովսկու հակառակորդները այժմ ընդունում են նրա տեսակետները և ենթարկվում են նրա անհողդողդ և աննկուն տրամաբանության ուժին»[24]։ Արշ. Մելիքյանը զարմանքով հարց է տալիս, թե ո՞ր հակառակորդների մասին է խոսքը, «ռենեգատներ՝ ինչպես մի Բերդիաև և մի Ստրուվե, մի Տուգան Բարանովսկի, որոնք երբեք իսկական և մաքուր մարքսիստներ չեն եղել, թե մի Պլեխանով, մի Լենին... փորձեցեք վերջիններիս գրությունները առաջ բերել և առարկել։ Այն ժամանակ ես կասեմ, որ դուք արդարացի եք։ Սակայն դուք երբեք այդ չեք կարող անել...»։ Ցույց տալով Ֆրանդյանի մարքսիզմից անտեղյակ լինելը, Արշ. Մելիքյանը հետևյալ խորհուրդն է տալիս նրան. «Թողեք առայժմ քննադատել մարքսիզմը և դիմեցեք նրա ուսումնասիրությանը, ով գիտե հրաշք է, գուցե մի բան դուրս գա, թեև խոստովանում եմ, շատ քիչ հույս ունեմ»։ Մերկացնելով մարքսիզմի մասին Ֆրանդյանի չհիմնավորված իդեալիստական հորինվածքները, նշում է, որ «տնտեսականի մեջ պետք է որոնել երևույթի արմատները»[25]։

Այսպիսով, այս և մի շարք ուրիշ հոդվածներում, Արշ. Մելիքյանը, որպես մարքսիստ տեսաբան, հետևողականորեն պաշտպանում է մարքս-լենինյան տեսությունը, մերկացնում Մախին, Ավենարիուսին և նրանց հայ հետևորդ Ֆրանդյաններին։

*

Արշ. Մելիքյանը Երևանում իր գործնական և տեսական աշխատանքներով խոշոր դեր է խաղացել մարքսիստական գաղափարների պրոպագանդման գործում։ Այդ աշխատանքը նա սկսեց որպես ուսուցիչ, որը սովորող երիտասարդության և ուսուցչության հետ լայն շփումներ ուներ, իսկ հետո նաև որպես բոլշևիկյան «Խոսք» թերթի խմբագիր։ Նա աշխատելով Երևանի դպրոցներում, որպես ուսուցիչ, շուտով դառնում է աշակերտների սիրելին և շատ երիտասարդների մտերիմ խորհրդատուն։ Նրա մոտ խորհրդի էին գալիս նաև աշակերտների ծնողները բազմաթիվ հարցերով։ Սակայն Արշ. Մելիքյանը մեծ հասարակական դիրք գրավեց, երբ արտասահմանից վերադառնալուն պես ձեռնամուխ եղավ բոլշևիկյան հայերեն թերթի հրատարակման գործին։ Նա խորապես համոզված էր, որ թերթը՝ որպես կոլեկտիվ կազմակերպիչ և պրոպագանդիստ, հնարավորություն կունենա մարքսիստական գաղափարներ տարածելու լայն մասսաների մեջ։ Սակայն ցարական ծանր ռեժիմի պայմաններում հեշտ չէր իրագործել նման նպատակադրում։ Երկար աշխատանքից հետո նրան հաջողվեց միայն 1913 թ. դեկտեմբերի 2-ին թերթի հրատարակման թույլտվություն ստանալ և միայն 1914 թ. սկզբին Արշ. Մելիքյանի հրատարակությամբ և խմբագրությամբ սկսեց լույս տեսնել հասարակական, տնտեսական և գրական բոլշևիկյան «Խոսք» շաբաթաթերթը։ Արշ. Մելիքյանը թերթում տպագրում է բառ ու բանով համեմված բազմաթիվ հոդվածներ, որով լայն ժողովրդականություն է վայելում։ Շուտով թերթի շուրջն է համախմբում ունակ լրագրողների մի խումբ, դրանց մեծ մասը Արշ. Մելիքյանի աշակերտներն էին և նրա գաղափարներով դաստիարակված երիտասարդներ։

---

24 Նույն տեղում։

25 Նույն տեղում, թ. 10։

Շաբաթաթերթը շուտով մեծ ժողովրդականություն է ստանում և լայն տարածում գտնում։ Թերթը ուներ 12 բաժին, որոնց թվում՝ քաղաքական, գյուղատնտեսական, տնտեսական, գեղարվեստական, երգիծական, քննադատական և բիբլիոգրաֆիայի, իրավաբանական, գիտա-սանիտարական, ներքին և արտաքին լուրերի և այլն։ 1914 թ. «Խոսքը» № 17-ից հակակառավարական ուղղության համար արգելվում է։ Այդ կապակցությամբ Թիֆլիսից մամուլի կոմիտեի նախագահ Կոլուբովը Երևանի նահանգապետին ուղղված ապրիլի 28-ի հեռագրում նշում է «Հաճեցեք կարգադրել արգելելու հայերեն «Խոսք» թերթի 17-րդ համարը»[26]։ Իսկ մայիսի 2-ին հատուկ գրությամբ կոմիտեն պահանջում է հաղորդել, թե քանի օրինակ է «Խոսքի» № 17 տպագրվել և քանիսն է հաջողվել հավաքել։

Այդ առաջարկի համաձայն Երևանի նահանգապետը 1914 թ. ապրիլի 28-ից կարգադրում է արգելել «Խոսք» թերթը, որը տպագրվում էր «Կուլտուրա» տպարանում։ Տպարանը խուզարկվում է, սակայն տպագրված 400 օրինակից հայտնաբերվում է միայն 1 օրինակ։ Կարգադրություն է արվում հայտնաբերել նաև մնացած համարները։ Հետախուզությունը պարզում է, որ քաղաքի բաժանորդներին է ուղարկվել մոտ 110 օրինակ, իսկ 200 օրինակ՝ քաղաքից դուրս բաժանորդներին։ 24 օրինակ հայտնաբերում են Արշ. Մելիքյանի մոտ՝ խմբագրատան խուզարկության ժամանակ[27]։ Սակայն խուզարկությունները շարունակվում են, որի հետևանքով նորից հնարավոր է լինում գտնել 5 օրինակ թերթ ցրիչների մոտ և 3 օրինակ կրպակում[28]։ Այսպիսով, հնարավոր է լինում 400 օրինակից հայտնաբերել միայն 33 օրինակ։

Այդ կապակցությամբ դատական գործ է բացվում Արշ. Մելիքյանի դեմ, որը մեղադրվում է հակակառավարական գործունեության մեջ։ 1914 թ. հունիսի 20-ին ոստիկանությունը Արշ. Մելիքյանին ստիպեց դատի տակ գտնվելու պատճառով հրաժարվել խմբագրի պաշտոնից և դիմել, որ իր փոխարեն ուրիշ խմբագիր նշանակվի։

Թիֆլիսի դատական պալատը 1914 թ. հոկտեմբերի 3-ին որոշեց 3 ամսով բանտարկություն տալ կամ 3 հազար ռուբլի տուգանել Արշ. Մելիքյանին։ Պարզ էր, որ նման գումար նա ի վիճակի չէր վճարելու, որի համար էլ ձերբակալվեց և նետվեց Երևանի բանտը[29]։ Բանտային ծանր հալածանքից Արշ. Մելիքյանին փրկելու համար ակտիվ գործունեություն են ծավալում նրա ընկերներն ու գաղափարակիցները։ Նրանք դիմում են բազմաթիվ ունևորների, տարբեր պայմաններ են առաջարկում նշված գումարը որևէ կերպ ձեռք բերելու և նվիրական ընկերոջը բանտից ազատելու համար։ Այդ գործում նրանց ընդառաջում է Սմբատ Խաչատրյանը, որը համաձայնվում է 3000 ռուբլի գրավ դնել՝ Արշ. Մելիքյանին բանտից ազատելու համար։ Արշ. Մելիքյանը 1914 թ. հուլիսի 7-ին ազատվելով բանտից, ոստիկանությանը տված գրության մեջ ցանկություն է հայտնում շարունակելու «Խոսքի» հրատարակությունը նախկին կարգով[30]։ Նա դիմում է պետական սենատին, որի հիման վրա 1914 թ. նոյեմբերին, դատա-

---

26 ՄԼԻ Հայկական ֆիլիալի արխիվ, ֆ. 4656, ց. 1, գ. 19, թ. 1։
27 Նույն տեղում, թ. 10։
28 Նույն տեղում, թ. 12։
29 Նույն տեղում, թ. 22։
30 Նույն տեղում, թ. 26։

բանը նորից վերանայելով գործը, գտնում է, որ հանցանքը ոչ թե պետությունը տապալելու կոչ էր, այլ բուրժուական կարգերը քննադատելու մի փորձ[31]։

Արշ. Մելիքյանը 1914 թ. դեկտեմբերի 6-ին Երևանի նահանգապետին ուղղված դիմումով խնդրում է, քանի որ իրեն ներկայացված մեղադրանքները չեն ապացուցվել, ապա թույլատրել նախկին պայմանով շարունակելու «Խոսք» թերթի հրատարակությունը[32]։

Նահանգապետը, սակայն, չէր կարող հանդուրժել Արշ. Մելիքյանի հրատարակած հեղափոխական թերթը և նրա հրատարակությունը վերականգնելու թույլտվություն չտվեց։ Արշ. Մելիքյանը 1915 թ. հունվարին նորից դիմում է «Խոսքի» հրատարակությունը շարունակելու հարցով, բայց այս անգամ էլ մերժում է ստանում։

Սակայն այստեղ տեղին է կանգ առնել 1914 թ. ապրիլի 26-ին լույս տեսած «Խոսքի» № 17-ի բովանդակության վրա, որ այնքան մեծ աղմուկ բարձրացրեց և կառավարական օրգաններին խիստ անհանգստություն պատճառեց։

Թերթի առաջնորդողում, որը Արշ. Մելիքյանի գրչին է պատկանում, իրականում գոյություն ունեցող կարգերը հեղափոխական ճանապարհով տապալելու կոչ է արվում։ «Բուրժուա-կապիտալիստական կարգերը,— գրում է Արշ. Մելիքյանը,— որոնց անկյունաքարն է մասնավոր սեփականությունը և ուրիշի աշխատանքի շահագործումը և սեփականացումը, զարգացնում և ստեղծում են այնպիսի հիվանդություններ, որոնց կատարյալ բուժումը կարող է տեղի ունենալ միայն հասարակական արմատական կերպարանափոխությունով և հիմնական հեղաշրջումով»[33]։ Այնուհետև ցույց է տրվում, որ հասարակական բազմաթիվ չարիքներ, ինչպես, օրինակ, թոքախտը, հարբեցողությունը, «վատ հիվանդությունները», «անբարոյականությունը» և ինքնասպանությունը հետևանք են գոյություն ունեցող հասարակական հարաբերությունների և հասարակական կյանքի պայմանների։ Վիճակագրությունը պարզ կերպով ցույց է տալիս, որ այդ բացասական երևույթների արմատները պետք է որոնել տիրող կարգերի մեջ[34]։ Արշ. Մելիքյանը մերկացնելով բուրժուական հասարակարգը, նշում է, որ շահագործողները մասսաներին խաբելու համար հաճախ ձևացնում են, թե միջոցներ են ձեռնարկում գոյություն ունեցող արատները վերացնելու համար։ «Փարիսեցու կեղծ դիմակը հագած, նրանք ճգնում են բարեգործությամբ և ժամանակավոր միջոցներով սպեղանիներ դնել մարդկության այդ վերքերի վրա, որոնց համար անհրաժեշտ է վիրաբույժի անխնա նշտարը»[35]։ Մինչդեռ ժողովրդին կեղեքողները ցանկանում են նրա աչքերը կապել ինչ-որ բարեգործական իլյուզիաներով։ «Ավելի զզվելի և ավելի նողկալի տեսարան, քան բուրժուական բարեգործությունը, դժվար է անգամ երևակայել։ Աջ ձեռքով սերմանում են չարիք և մահ, իսկ ձախ ձեռքով ողորմություն են տալիս իրենց իսկ մակաբույծ և անպետք գոյության զոհերին, աջ աչքը հանում են ուրիշի արողջությունից և քրտնքից քամած հնչուն մետաղին և դրամագլխին, իսկ ձախ աչքից կաթեցնում են կոկորդիլոսի կեղծ ու պատիր արցունքի շիթեր, առանց դիմակի՝ նզովում են ժողովրդի ստորին խավերի աշխատավոր ձեռքերը և հա-

31 Նույն տեղում, թ. 29։
32 Նույն տեղում, թ. 30։
33 «Խոսք», 1914, 26 ապրիլի, № 17։
34 Նույն տեղում։
35 Նույն տեղում։

ճախ արյան ճապաղիքների մեջ են խեղդում նրանց արդար բողոքը և տրտունջը, իսկ դիմակ ծածկած՝ լալկան ձայնով քարոզում են մարդասիրություն և մայրախնամ քնքուշ վերաբերմունք դեպի մերձավորը»։ Արշ. Մելիքյանը հանդես գալով աշխատավորների շահերի ջերմ պաշտպանի դերում, այնուհետև զայրույթով շարունակում է. «Կա արդյոք այս աշխարհում մի բան, որ ավելի արգահատելի և ավելի շինծու լիներ, քան այս դիմակահանդեսը, այս բուրժուական դիմակահանդեսը»[36]։ Այդ դիմակահանդեսին նա հակադրում է բանվոր դասակարգի և աշխատավոր մասսաների միասնական ուժը, որը իր հզոր բռունցքը բարձրացնելով, բուրժուաներին ասում է. «Դուք ձեր բուրժուական մարդասիրությամբ մարդկությունը չեք փրկի հասարակական չարիքներից և արատներից. նույնիսկ ավելին՝ դուք եք նրանց սերմանողը. ձեզ էլ, ձեր մարդասիրությունն էլ, ձեր կարգերն էլ պետք է արմատապես կերպարանափոխել։ այդ ժամանակ միայն մենք չենք ունենա ոչ թոքախտավոր, ոչ արբեցող, ոչ անառակ կին։ Սպիտակ ծաղիկների դեմ ալ-կարմիր վարդեր»[37]։

Տաղանդավոր մարքսիստ տեսաբանի կողմից գրված այդ առաջնորդողը փաստորեն մի դատավճիռ էր բուրժուական կարգերի նկատմամբ, հեղափոխական պաթոսով գրված մի կոչ՝ գոյություն ունեցող կարգերը տապալելու և դրանով իսկ ցարիզմի փթած իրավակարգի խորտակումով վերացնելու նրա ծնած և աշխատավորությանը հյուծող բոլոր չարիքները։

Մեծ հետաքրքրություն է ներկայացնում «Ռ. Օ.» ստորագրությամբ տպագրված «Գաղթը Երևանի նահանգից» հոդվածաշարը, որի 6-րդ բաժինը տպագրված է «Խոսքի» № 17-ում։ Այդ հոդվածում կոնկրետ փաստերով ցույց է տրվում հայ գյուղացու չարքաշ և փորձություններով լի կյանքը, աղքատությունն ու տնտեսության հետամնացությունը, զորքաների և ցարական չինովնիկների կողմից նրա կեղեքումն ու տանջալից հալածանքները։ «Շնորհիվ հիշյալ պատճառների, գրում է հոդվածագիրը, հայ գյուղացիությունը հասել է տնտեսական աննկարագրելի նեղ դրության. ծանրաբեռնված է պետական և մասնավոր պարտքերով. հաճախ կալը վերջացնելուց հետո գյուղացին տուն է տանում միայն նորոգած պարտամուրհակը և կալից մի շաբաթ չանցած, նա նորից սկսում է պարտք անել, տոկոս վճարել և պարտքով ապրել մինչև հետևյալ տարին, մինչև նոր կալը»[28]։ Այդպիսին էր վիճակը Հայաստանի բոլոր շրջաններում, որտեղ «Տարին տասներկու ամիս, առավոտ թե կեսօր, գարու կամ ցորենի հետ խառն, միևնույն ցամաք հացն է նրանց կերակուրը. ամիսներով տաք կերակուրի երես չեն տեսնում. թեյը, պանիրը, միսը, յուղը, կարագը և այլ մթերքներ միայն շատ հարուստների սեղանի վրա կպատահեք։ Սնունդի պակասության պատճառով հայ գյուղացին հյուծվում, մաշվում է ֆիզիկապես... Բժշկական օգնությունը միանգամայն բացակայում է և տարափոխիկ տիֆը, քութեշը և ուրիշ հիվանդություններ մեծ զոհեր են տանում»[39]։ Ահա դրանք են պատճառները, որ ներզաղթ են ծնում և ամեն տարի տասնյակ հազարավոր աշխատավորներ, թողած տուն ու տեղ, օտար ափերում ու երկրի տարբեր վայրերում աշխատանք և ապրուստի միջոց են փնտրում, ենթարկելով իրենց կյանքը նոր փորձությունների։

---

36 Նույն տեղում։
37 Նույն տեղում։
38 Նույն տեղում։
39 Նույն տեղում։

«Կրթական գործը Զանգեզուրում» հոդվածաշարքում հեղինակը կոնկրետ թվերի հիման վրա վերլուծում է գավառի տնտեսական հետամնացությունն ու աղքատությունը և դրանից էլ կրթական գործի ցածր մակարդակը, որի հետևանքով գավառի ամբողջ բնակչության միայն 5 տոկոսն էր տարրական կրթություն ստանում, իսկ մնացած 95-ը մնում է անգրագետ, խարխափում տգիտության մեջ։ Հմուտ տեսաբան և մարքսիզմի կրքոտ պրոպագանդիստ Արշ. Մելիքյանը փաստական նյութը այնպես դիպուկ էր ընտրում, և այնպես էր մատուցում մասսաներին, որը, բնականաբար, պետք է հանգեր հեղափոխական ճանապարհով գոյություն ունեցող կարգերը տապալելու եզրահանգմանը։

Արշ. Մելիքյանի գրչին է պատկանում «Կյանքից ու գրականությունից» անստորագիր հոդվածը, որտեղ նա մի շարք կարևոր հարցեր է առաջ քաշում և հատկապես նշում մարքսիստների դիրքորոշումը մանրբուրժուական և լիբերալ մամուլին մասնակցելու վերաբերյալ։ Նա այն կարծիքն է հայտնում, որ «գրելով բուրժուական կամ քաղքենի լրագրում, մարքսիստը դեռ անգիտակից կամ անկազմակերպ համախոհների մտքերի մեջ առաջ է բերում շփոթություն և անորոշություն։ Մարքսիզմի վերաբերմունքը դեպի այլ հոսանքները պիտի լինի անհաշտ և ոչ մի երկիմաստության առիթ չպիտի տա»։ Ելնելով մարքսիզմի հետևողական դիրքերից, Արշ. Մելիքյանը շարունակում է. «Եթե մենք ընդունում ենք, որ այդ ուսմունքի կողմնակիցները պիտի կանգնած լինեն դասակարգային հողի և տեսակետի վրա, որ նրա հետևողները պիտի կազմեն ինքնուրույն և անկախ կուսակցություն, ուրեմն նրանց բարեկամությունը և հակառակ բանակի օրգանների խմբագրատների շեմքերի մաշելը պետք է համարել մի անթույլատրելի և աններելի հանցանք»[40]։

Այսպիսով, «Խոսքի» բոլոր համարները և հատկապես № 17-ը ընդգրկում էր քաղաքական ու տնտեսական կյանքի ամենահրատապ և ժողովրդական լայն մասսաներին հուզող հարցեր և փաստորեն կոչ էր անում շահագործումից ու ճնշումից ազատվելու համար հեղափոխական ճանապարհով տապալել կալվածատիրական, բուրժուական կարգերը, վերջ տալ ցարական դաժան հալածանքներին։

*

Մեծ հետաքրքրություն են ներկայացնում Արշ. Մելիքյանի դատավարության նյութերը, նրա պաշտպանական ճառը, որտեղ ականավոր մարքսիստը շատ հմուտ կերպով շարունակում է և՛ պաշտպանվել և՛ մերկացնել ցարական կարգերը։

Պահպանվել է Արշ. Մելիքյանի ճառի ձեռագիր տեքստը, որը բավականին հետաքրքիր փաստաթուղթ է։ Այնտեղ, մի կողմից մերկացվում է ցարական ծանր ռեժիմը, որտեղ ազատ խոսքը ճնշվում էր ամենայն դաժանությամբ և մյուս կողմից՝ Արշ. Մելիքյանը հանգես է գալիս որպես բազմակողմանի զարգացած, հմուտ տեսաբան ու կրքոտ պրոպագանդիստ։ Նա իր ճառը սկսում է հետևյալ խոսքերով. «Ես գիտեմ, թե ինչպիսի ծանր և անհավասար պայմաններում պետք է պաշտպանվել քրեական օրենքի 1039 հոդվածով ինձ ներկայացրած մեղադրանքից, բայց և այնպես պատրաստ եմ ապացուցել, որ ներկա գործում նշված հոդվածով հանցանք չկա»[41]։

40 Նույն տեղում։

41 ՄԼԻ հայկական ֆիլիալի արխիվ, ֆ. 4056, ց. 1, գ. 18, թ. 1։

Մեզ հասած բազմաթիվ ձեռագրերը ցույց են տալիս, որ Արշ. Մելիքյանը դատավարության կապակցությամբ ուսումնասիրել է մեծ քանակությամբ իրավաբանական, տնտեսագիտական և այլ կարգի գրականություն, նրանցից համապատասխան քաղվածքներ է արել և տվել իր եզրահանգումները և բնորոշումները։ Նա, օրինակ, հանգամանորեն բացատրում է պետական կարգի և կառուցվածքի տարբերությունը և տալիս է գոյություն ունեցող պետական կարգի իրավաբանական բնորոշումը, որպես «պետության մեջ ստեղծված իրավաբանական նորմա և հիմնարկություններ»[42]։ Նա տալիս է «գրգռել» (возбуждать) բառի իրավաբանական բացատրությունը, որպես հանցավոր ագիտացիա, նրա տարածման ձևերը և այլն։ Սակայն առարկելով նման մեղադրանքների դեմ, նշում է. «օրենքը չի արգելում ցանկանալ գոյություն ունեցող կարգերի փոխարինումը մի ուրիշով, անգամ դրան հասնելու միջոցները օրենքով չեն արգելվում»։ Եվ վերջապես նա վրդովմունքով գրում է. «Ինչո՞ւ չեն պատժվում մի շարք կուսակցություններ և ինչու արգելվում են ուրիշները։ Միայն նպատակին հասնելու միջոցների և ուղիների համար։ Հիմնական օրենքի 70 հոդվածի համաձայն խոսքի ազատություն է տրվում թույլ տրված սահմաններում։ Եվ ես գտնում եմ, որ անթույլատրելի ոչ մի բան չեմ գրել»[43]։ Մի ուրիշ տեղ նա գրում է. «Ինձ համար շատ դժվար է արդարանալ. քանի որ մեղադրական ակտում ապացույցներ չկան»[44]։

Այսպիսով, Արշ. Մելիքյանը, հենվելով հենց օրենսդրության վրա, մերկացնում է գոյություն ունեցող կարգերը և միապետական դաժանությունները։

Բանտից ազատվելով, Արշ. Մելիքյանը 1915 թ. բնակվում էր Երևանի Նաղարովյան փողոցի վրա գտնվող Խաչատուր Արզումանյանի բնակարանում՝ ամսական 15 ռ. վարձով։ Նա չկարողանալով վերականգնել «Խոսքի» հրատարակությունը, շարունակում էր իր ակտիվ հասարակական-քաղաքական աշխատանքը, հատկապես դպրոցական գործում և այլ բնագավառներում։ Նա պաշտպանելով Վ. Ի. Լենինի թեզերը, եռանդուն պայքար է տանում իմպերիալիստական, թալանչիական պատերազմի դեմ։

Այդ տարիներին Արշ. Մելիքյանը եղել է համառուսաստանյան քաղաքների միության կովկասյան բաժանմունքի անդամ, իսկ 1916—1917 թվականներին աշխատել է այդ միության Երևանի կոմիտեի քարտուղար, որի նախագահն էր Ս. Խաչատրյանը[45]։ Արշ. Մելիքյանը հատկապես մեծ աշխատանք է տանում պատերազմի հետևանքով տուժածներին օգնելու, հայ գաղթականներին տեղավորելու, նրանց ամեն տեսակ օգնություն կազմակերպելու ուղղությամբ։

Ցարիզմի տապալումից հետո Արշ. Մելիքյանը ակտիվ գործունեություն է ծավալում աշխատավորների շահերի պաշտպանության ուղղությամբ։ Հատկապես նրա ջանքերով Երևանի սովետը որոշում ընդունեց 8-ժամյա բանվորական օրվա և մի շարք այլ խնդիրների մասին։

Արշ. Մելիքյանը մեծ աշխատանք էր տանում նաև դպրոցական գործի վերափոխման և այն դեմոկրատական սկզբունքներով կառուցելու ուղղությամբ։ Նա գտնում էր, որ ժողովրդական կրթության, երիտասարդ սերնդի դաստիա-

---

42 Նույն տեղում, թ. 23—24։

43 Նույն տեղում, գ. 18, թ. 7։

44 Նույն տեղում։

45 ՄԼԻ հայկական ֆիլիալի արխիվ, ֆ. 4056, ց. 1, գ. 6, թ. 3։

ռակման գործը պետք է ժողովուրդը ինքը դլխավորի՝ ելնելով իր շահերից և ժամանակի պահանջից։

*

Հոկտեմբերյան հեղափոխության հաղթանակով Արշ. Մելիքյանի կյանքում մի նոր բեղմնավոր շրջան է սկսվում։ Նա հատկապես մեծ աշխատանք է ծավալում հայ ժողովրդի տագնապալից վիճակը կարգավորելու, Հայաստանում սովետական կարգերի հաղթանակը ապահովելու համար։

1918 թ. Արշ. Մելիքյանը Երևանում վերսկսում է «Խոսք» թերթի հրատարակումը։ Թերթը 1918 թ. նոյեմբերի 30-ին ազդարարում է ՌՍԴԲԿ Երևանի կազմակերպության ստեղծման մասին և իրեն հայտարարում նրա օրգանը։ «Խոսքը» մեծ աշխատանք է ծավալում Հայաստանում կոմունիստական կազմակերպությունների վերականգնման և նրա բջիջներ ստեղծելու դործում։ Արշ. Մելիքյանը այդ նպատակին էր ծառայեցնում թե՛ իր գաղափարական աշխատանքի ողջ ուժերն ու տաղանդը և թե՛ իր նյութական միջոցները։ Նա հաճախ էր հանդես գալիս հրապարակային դասախոսություններով և դրանցից ստացած միջոցները հատկացնում էր մարքսիստական խմբակների ու կազմակերպությունների ստեղծման գործին։ Նրա բնակարանը և «Խոսքի» խմբագրատունը հեղափոխական գործիչների և հատկապես մարքսիստ-ինտերնացիոնալիստների, սպարտակյանների՝ Ղուկաս Ղուկասյանի, Աղասի Խանջյանի, Արմենակ Բուդաղյանի և շատ երիտասարդների հավաքատեղին էր, որոնց հայացքների ձևավորման գործում Արշ. Մելիքյանը նշանակալից դեր է կատարել։

Շուտով «Խոսքը» դառնում է բոլոր հեղափոխական ուժերի մարտական տրիբունը, որի համար նրա խմբագիրը բանտարկվում է և թերթի հրատարակումը արգելվում։

1919 թ. օգոստոսի 1-ին Հայաստանի պառլամենտի անդրանիկ նիստի մուտքի տոմսից երևում է, որ Արշ. Մելիքյանը մասնակցել է այդ նիստին[46]։ 1919—1920 թվականներին Արշ. Մելիքյանը՝ որպես դաշնակցական պառլամետնի սոցիալ-դեմոկրատական ֆրակցիայի միակ բոլշևիկ ներկայացուցիչ, ուժեղ պայքար է ծավալում դաշնակների հակաժողովրդական քաղաքականությունը մերկացնելու համար։ Նա հետաքրքիր նյութեր է տալիս «Խոսք» թերթի մի քանի համարներում տպագրած «Ինչպես մտանք Հայաստանի հանրապետության պառլամենտը և ինչու հեռացանք» հոդվածաշարում։ Այնտեղ Արշ. Մելիքյանը գրել է. «Պառլամենտը մեզ համար նպատակ չէ. այլ միջոց միայն, որի տրիբունից մենք հնարավորություն ունեինք և ձգտում էինք ունենալ՝ մեր հեղափոխական դաղանանքներն ու սկզբունքները լայն մասսաներին հասցնելու համար։

Մենք նման էինք այն հեղափոխականներին, որոնք 1907 թ. և հետադա ռեակցիայի տարիներին օգտագործել են նույնիսկ Պետական դումայի «ախոռը»։

«Խոսք» թերթում տպագրված է Արշ. Մելիքյանի դեկլարացիան, որը ի տարբերություն մենշևիկ հաշտվողականների, պաշտպանում է հետևողական հեղափոխական գիծ։ Այնտեղ նա գրել է. «Հայ ժողովրդի փրկության հենարանը նորեն պիտի լինի Ռուսաստանը։ Պետք է վերականգնել խզված կապերը.

---

46 ՄԼԻ հայկական ֆիլիալի արխիվ, ֆ. 4056, ց. 1, գ. 6, թ. 6։

ստեղծել համակովկասյան ֆեդերացիա՝ տնտեսական սերտ կապերով Ռուսաստանի հետ»։ Այդպիսով, Արշ. Մելիքյանը կարևոր նշանակություն էր տալիս բոլոր ճնշված ժողովուրդների և հատկապես հայ ժողովրդի ազատագրման գործում Սովետական Ռուսաստանի փրկարար դերին։ Նա ամբողջովին համոզ-

ԲԱՆԻՈՐՆԵՐ ԲՈԼՈՐ ԵՐԿՐՆԵՐԻ, ՄԻԱՑԷՔ:

ԵՐԿՈՒՇԱԲԹԻ, ՄԱՐՏԻ 19-Ի Ն.

ՔԱՂԱՔԱՅԻՆ ԱԿՈՒՄԲԻ
ԴԱՀԼԻՃՈՒՄ

ՑՆՂԻ ՊՈՒՆԵՆԱՑ

Ա. Մ.
ՄԵԼԻՔԵԱՆԻ
ԴԱՍԱԽՕՍՈՒԹԻՆԸ
„ՊԱՏԵՐԱԶՄԸ ԵՒ
ՅԵՂԱՓՈԽՈՒԹԻՆԸ"
ՆԻՒԹԻ ՄԱՍԻՆ

ՏՈՄՈՒՄ ԴՆԵՐԸ 1 Ր. 50 Կ., 1 Ր. ԵՒ 50 Կ

ՍԿԻԶԲՆ Է ԾԻԲԿՈՍՅԱՆ Ա. 4Ն-ԴՆ

ված էր, որ սոցիալիստական հեղափոխությունը պետք է հաղթանակի Անդրկովկասում, որ ազգայնական կուսակցությունների անփառունակ իշխանությունը ժամանակավոր է։ Նա իր շատ կարևոր նշանակություն ունեցող «Միակ ուղիղ ճանապարհը» հոդվածում գրել է. «Բոլշևիզմը պետք է հաղթանակի նաև այստեղ՝ Անդրկովկասում, Հայաստանում»։ Միաժամանակ սոցիալիստական հեղափոխությունը իր թևերը կտարածի բազմաթիվ այլ երկրներում։ «Հաղթանակը կատարյալ կլինի,— գրել է Արշ. Մելիքյանը,— երբ միջազգային պրոլետարիատը, տապալելով միջազգային բուրժուազիայի քաղաքական գերիշխանությունը, իր ձեռքը կառնի իշխանության ղեկը և կազատագրի աշխատավոր մասսաներին թե՛ կապիտալի և թե՛ ազգային ճնշումից»։

1919 թ. Արշ. Մելիքյանը մեծ աշխատանք է ծավալում երիտասարդության շրջանում և դառնում է Հայաստանի երիտասարդության «Սպարտակ» կազմա-

Тверитинъ Кадетскій

Тверитинъ [illegible] Кадетовъ. Въ [illegible] три [illegible] [illegible], [illegible] [illegible] „Голос соц.-демократа" [illegible]. Тутъ [illegible] [illegible] [illegible], [illegible] [illegible] [illegible] Тверитинъ [illegible]: Тутъ [illegible] [illegible] [illegible].

Тверитинъ [illegible]. „На всякій случай разъясню. Матеріальными предме-

կերպության հիմնադիրներից մեկը։ Դեռևս 1917 թ., երբ Ղուկաս Ղուկասյանի նախաձեռնությամբ տեղի է ունենում երիտասարդ մարքսիստների անդրանիկ ժողովը, Արշ. Մելիքյանը երիտասարդության առջև հանդես է գալիս զեկուցումով պատմական մատերիալիզմի և կուսակցության պատմության վերաբերյալ։ 1919 թ. մարտի 19-ին Երևանի աշակերտական մարքսիստական խմբակի կողմից կազմակերպված Արշ. Մելիքյանի «Պատերազմը և հեղափոխությունը» թեմայով դասախոսությունը մեծ հաջողությամբ է անցնում, դասախոսության ընթացքում նա մանրամասն գիտական վերլուծության է ենթարկում պատերազմի իմպերիալիստական, թալանչիական բնույթը և ցույց տալիս Հոկտեմբերյան հեղափոխության պատմական նշանակությունն ու ազատարար դերը ճնշված ժողովուրդների համար։

Արշ. Մելիքյանի դասախոսությունները և ելույթները արգելվում էին դաշնակցական կառավարության կողմից։ Այսպես, դաշնակցական զինվորական «Զանգ» թերթը վայնասուն բարձրացրեց Արշ. Մելիքյանի մարտի 19-ի դասախոսության առթիվ, այն համարելով «ագիտացիոն ճառ», և պահանջեց արգելել նրա ելույթներն ու դասախոսությունները։ Դաշնակցական պարագլուխները սարսափում էին Արշ. Մելիքյանի հատու խոսքից և նրա ուժեղ երգիծանքից։ «Զանգը» նշում է, որ Արշ. Մելիքյանը «սիրում է իր բոլոր հակառակորդներին հիմարության աստիճան տգետ դուրս բերել»։

Արշ. Մելիքյանը 1919 թ. Երևանում կայացած կուսակցական սեպտեմբերյան գաղտնի խորհրդակցության կազմակերպիչներից էր։

Հայաստանի կուսակցական կազմակերպությունների պատմության կարևորագույն հարցերի լուսաբանման խնդիրը ևս սերտ կերպով կապվում է Արշ. Մելիքյանի անվան հետ։

Հայաստանի պառլամենտում Արշ. Մելիքյանի հետևողական գործունեությունը չկարողացան հանդուրժել ոչ դաշնակցականները և ոչ էլ «սոցիալ-դեմոկրատ» մենշևիկ լիդերները։ Նրանք անում էին ամեն ինչ ազատվելու իրենց համար անհանդուրժելի և վտանգավոր բոլշևիկից։ Նրանք հասան իրենց նպատակին։ 1918 թ. «Խոսքում» տպագրված ֆելիետոնը այդ մասին նշում է. «սոցիալ-դեմոկրատ օպլոստնոյ կոմիտեն,— երկու վրացի և մեկ հայ, վճռեցին Հայաստանի պառլամենտեն դուրս քշել իրենց չենթարկվող Ա. Մելիքյանին. քշեցին ու տեղը դրին իրենց խոնարհ ծառային»[47]։

1920 թ. Արշ. Մելիքյանի հետ, որը երիտասարդության սիրելին էր, տեղի ունեցավ մի թյուրիմացություն, որը երկար ժամանակ օգտագործում էին նրա թշնամիները ականավոր մարքսիստի վրա ստվեր գցելու և հեղինակազրկելու համար։ Փետրվարի 24-ին քաղաքային ակումբի շենքում Արշ. Մելիքյանը հանդես եկավ «Կապիտալի ու աշխատանքի համաշխարհային պայքարը և Հայաստանի անկախությունը» զեկուցումով։ Նա միանգամայն ճիշտ դիրքերից մերկացրեց իմպերիալիստների գիշատիչ քաղաքականությունը փոքր ազգերի ու ճնշված ժողովուրդների հանդեպ։ Սակայն Հայաստանում դաշնակների տիրապետությունը տապալելու և անհապաղ սովետական կարգեր հաստատելու վերաբերյալ այն կարծիքը հայտնեց, որ բոլշևիկները ստեղծված իրադարձությունից ելնելով, ավանտյուրիզմից խուսափելու համար, պետք է զգույշ քաղաքականություն վարեն։ Երիտասարդությունը խորամուխ չլինելով ստեղծված

---

47 «Խոսք», 1918, №...

իրադրության մեջ։ Արշ. Մելիքյանի նման դրությամբ շատ ցավագին ընդունեց, համարելով այն նահանջ սկզբունքային հեղափոխական դիրքերից։ Դրա համար նրանք սկսեցին կրքոտ կերպով դատապարտել իրենց ուսուցչին, հրաժարվել նրան իրենց գաղափարական առաջնորդը համարելուց և այլն։ Որոշ տաք գլուխներ հասան այն բանին, որ ՌԿ(բ)Կ Երևանի քաղաքային կոմիտեն որոշում ընդունեց Արշ. Մելիքյանին կուսակցության շարքերից հեռացնելու մասին։ Այդ որոշումը հետագայում բեկանվեց վերադաս կուսակցական օրգանների կողմից և Արշ. Մելիքյանը որպես հեղափոխության անկուն դինվոր շարունակեց իր մեկընդմիշտ ընտրած ուղին։

Արշ. Մելիքյանի համար ստեղծվում է բավականին ծանր դրություն։ Թշնամիները ուրախանում են, բարեկամները երես են թեքում։ Նման պայմաններում աշխատանքը դառնում է անհնարին։ Նա մեկնում է Թիֆլիս, այնտեղից էլ Վլադիկավկազի վրայով Մոսկվա, Վ. Ի. Լենինի մոտ, որի հետ դեռ արտասահմանից բարեկամական կապեր ուներ։

Գալով Մոսկվա, Արշ. Մելիքյանը այցելում է Վ. Ի. Լենինին և շատ սրտառուչ ու ջերմ ընդունելություն է գտնում։ Վ. Ի. Լենինի հանձնարարությամբ կարգավորվում են նրա գործերը։ Վ. Ի. Լենինը քաջ ծանոթ լինելով Արշ. Մելիքյանի ընդունակություններին և կարևոր նշանակություն տալով երիտասարդ սովետական երկրի մասին արտասահմանյան մամուլի հաղորդումների հավաքմանն ու ընդհանրացմանը, նրան նշանակում է Կրեմլում արտասահմանյան մամուլի ռեֆերենտի պաշտոնում։

Արշ. Մելիքյանը այս գործում էլ շատ արդյունավետ աշխատանք է տանում, հավաքելով կարևոր տեղեկություններ, այն ընդհանրացնում և սիստեմատիկաբար հրավիրում Վ. Ի. Լենինի ուշադրությանը։

Այստեղ նա աշխատում է մինչև 1921 թ. գարունը։

ՌՍՖՍՀ կառավարությանը կից ՀՍՍՀ լիազոր ներկայացուցչի 1921 թ. ապրիլի 16-ին տրված վկայականից երևում է, որ Արշ. Մելիքյանը մի շարք ուրիշ կուսակցական աշխատողների հետ մոբիլիզացվել և աշխատանքի է ուղարկվել Հայաստան[48]։ Սակայն գալով Թիֆլիս, հարմար է գտնվում նրան թողնելու Վրաստանում հայկական մամուլի և կուլտուրայի բնագավառում ղեկավար աշխատանք կատարելու համար։ Այդ ժամանակից սկսած Արշ. Մելիքյանը հանդես է գալիս որպես ականավոր ժուռնալիստ և տեսաբան, խոշոր դեր կատարում հայ մամուլի էջերում մարքսիստական ժուռնալիստիկայի լենինյան տրադիցիաները արմատավորելու գործում։

Մարքս-լենինյան տեսությունը և նրա հեղափոխական ոգին բարձր դիրքերի վրա պահելու վերաբերյալ նրա բազմաթիվ հոդվածներն ու տեսությունները խոշոր ներդրում են հայ մարքսիստական մտքի զարգացման բնագավառում։

Արշ. Մելիքյանի գիտական և հասարակական գործունեությունը բազմազան էր ու բեղմնավոր։ Նա հայ կուլտուրայի ժրաջան ու անխոնջ մշակն էր։ Նա գրում էր «Հայոց պատմություն», «Դասակարգային կռիվը հայոց պատմության մեջ», «Հայ մամուլի պատմությունը», «Նյութեր հայ հասարակական շարժման պատմության» և մի շարք այլ աշխատություններ։

1926 թ. փետրվարի 21-ին Ա. Մռավյանը Արշ. Մելիքյանին ուղղված նամակում գրել է. «Հայոց պատմության մի ամբողջական կուրսի անհրաժեշտու-

48 ՄԼԻ հայկական ֆիլիալի արխիվ, ֆ. 4656, ց. 1, գ. 6, թ. 14։

թյունը մեր դպրոցների համար այժմ միանգամայն անհետաձգելի մի խնդիր է դարձել, ուստի հասկանալի է, թե ինչու մեծ անհամբերությամբ սպասում ենք ձեր աշխատությանը։ Ըստ մեր տեղեկության ձեր «Հայոց պատմության» առաջին մասը պատրաստ է, եթե ճիշտ է այդ, ապա շատ լավ կլինի մեզ ուղարկեք։ Երկրորդ մասի վերաբերյալ ի՞նչ կարող եք ասել, ե՞րբ պատրաստ կլինի։

Ընդհանրապես, խնդրում եմ, շտապ տեղեկացնեք, թե ի՞նչ վիճակում է այդ աշխատությունը, ի՞նչ է արված և ինչ եք մտածում անել»[49]։ Դժբախտաբար, այդ և այլ աշխատությունների վիճակը և ուր գտնվելը մնում է անհայտ։

1923 թ. սեպտեմբերին «26»-ի անվան Անդրկովկասյան կոմունիստական համալսարանը՝ որպես պատրաստված մարքսիստի Արշ. Մելիքյանին հրավիրում է դասախոսելու համալսարանում[50]։ Արշ. Մելիքյանը, այնուհետև, համալսարանի գոյության ամբողջ ընթացքում դառնում է նրա լավագույն դասախոսներից մեկը, որը մեծ ավանդ է դնում կուսակցական կադրերի պատրաստման ու նրանց մարքս-լենինյան ուսմունքով զինելու գործում։

1937 թ. Արշ. Մելիքյանը անհատի պաշտամունքի անօրինականության զոհ դարձավ, սակայն նրա նվիրական կյանքի պայծառ հիշատակը անմար կմնա սերունդների սրտում։

НЕУТОМИМЫЙ ПРОПАГАНДИСТ ЛЕНИНСКИХ ИДЕЙ
(К 90-летию со дня рождения Аршавира Меликяна)

Ц. П. АГАЯН
академик АН Арм. ССР

Р е з ю м е

Выдающийся марксист-ленинец Аршавир Меликян один из тех деятелей, которые всю свою жизнь посвятили великому делу освобождения трудового народа. Вступив в 1906 г. в ряды РСДРП, он стал одним из талантливых защитников ленинизма. Велики его заслуги в борьбе против царизма и власти дашнаков.

А. Меликян вел большую работу по укреплению большевистских организаций Армении, а также созданию молодежной организации «Спартак».

Его исследования в области истории и общественной мысли, а также литературоведческие труды представляют исключительный интерес.

---

49 Նույն տեղում, գ. 15, թ. 14։

50 ՄԼԻ հայկական ֆիլիալի արխիվ, ֆ. 4056, ց. 1, գ. 10, թ. 11։